

Ուղղագրութեան այս խառը վիճակում, իրարամերժ առաջարկութիւնների պայմաններում միանգամայն ճիշտ սկզբունքով էր առաջնորդուում «Հանդէս ամսօրեան»՝ ամուր պահելով աւանդական ուղղագրութիւնը եւ դոյզն-ինչ չընդունելով նրանից: Հէնց իր առաջին տարուանից բողոքեց ինքնահար ուղղագրութեան դէմ (անդ, 1887 թ. No. 9, էջ 134):

Հայերէնի կնճռոտ հարցերից են արեւմտահայ եւ արեւելահայ արտասանութեան ու տառադարձութեան հարցերը: Բոլորի համար էլ, այդ թուում եւ Մխիթարեանների, ցանկալի է ու անհրաժեշտ մեր երկու հատուածներում ստեղծել միասնական արտասանութիւն ու գրութիւն: Սակայն իրականում դա անհնարին էր: Առաջին անգամ այդ հարցը բարձրացրել է «Մասիս» (No. 1546): Այստեղ յօդուածագիրն առաջարկում է արեւելահայերէնում ռւմ, եմ վերջաւորութիւնները փոխարինել կը մասնիկով եւ ստեղծել մի միասնական լեզու: Սրան պատասխանում է Լ. Աղայեան՝ 1874 թ. գրելով «Հայկական հնչիւնների մասին (լուծումն տարակուսանաց)» գրքոյկը, որտեղ հակառակն է ասում, թէ լաւ կը լինի արեւմտահայերն իրենց սաներին սովորեցնեն, որ ք-ն ք արտասանեն, դ-ն՝ դ, գ-ն՝ գ, պ-ն՝ պ, տ-ն՝ տ, կ-ն՝ կ, եւ այլն: «Աստուածաշնչում» Պետրոս, Պօղոս, Պաղեստին բառերը պոլ են գրուած, հիմայ էլ թող նապոլէոն ասեն ու պոլ գրեն: Աղայեան սխալում է, երբ ծայրայեղութեան հասնելով, գրում է, թէ պոլսեցիք հայ վարժապետներ չեն ունեցել, դասաւանդել են լատին կամ լատինացած եւ կամ աղճատ հայախօս անգլիացի «միսիոնարներ», որոնք ձգտել են հայերէնը կրօնափոխութեան միջոց դարձնել:

Այս հարցի շուրջ սկսում է մի երկարատեւ գիտավէճ: «Արձագանգում» (1885) լոյս են տեսնում յօդուածներ, որոնց հեղինակները կրկնում են Աղայեանի կարծիքը, թէ թուրքերէնի ազդեցութեան տակ պոլսեցիք Պետերմանն արտասանում են Բեդերմանն, Պլատոնը՝ Բլատոն, Գարիբալդին՝ Կարիպալտի, Բերլինը՝ Պերլին, գրում են Բեգդալոնի, Տիպոլի վէկ եւ այլն: Նրանց կարծիքով այդ արտասանութեան պատճառներից մէկն էլ Մխիթարեան հայրերն են, որոնք կտրուած են բուն ժողովրդից, ժողովրդական արտասանութիւնից: Այս սխալ եզրակացութիւնից բխում է նրանց միւս

սխալը, թէ կարելի է Պոլսի ու Վանի դպրոցների միջոցով (եռաստիճան համակարգը սովորեցնելով) արեւմտահայերէնում վերականգնել խուլերի շարքը, որ արտասանեն պ, կ, ծ, ճ: Հնչիւնական այս երեւոյթի թիւր ըմբռնումը, նրա առաջացման պատմական ընթացքին անտեղեակ լինելը հեղինակներին յանգեցրել է այս սխալ եզրակացութեան:

«Բազմավէպի» 1886 թ. Գ պրակում (էջ 192) լոյս է տեսնում Հ. Աթանաս Տիրոյեանի յօդուածը՝ «Բացայայտութիւն մի հայկական տառերի հնչման եւ գրութեան մասին առ մեծ խմբագիրն «Մշակ» լրագրի» խորագրով: Յօդուածագիրն իրաւացիօրէն նշում է, թէ արեւմտահայերէնը նոյնպէս մշակուում եւ զարգանում է ժողովրդական կենդանի լեզուի միջոցով, այն յենում է Բարձր Հայքի, Աղձնեաց, Տայոց, Վասպուրականի բնակիչների կենդանի լեզուի վրայ, որ կենտրոնական Հայաստանի լեզուն է: Ովքեր կարծում են, թէ Մխիթարեաններն են աղաւաղել լեզուն, սխալում են, մի խումբ հայագէտներ ինչպէ՞ս կարող էին այդքան լայն տարածքով ազդեցութիւն ունենալ: Ընդունելով, որ «ոռուսահայոց հնչումն ընտրելագոյն է, քան գտաճկահայոցը»՝ ընդգծում է, թէ դա երբեք էլ չի նշանակում, որ տաճկահայոց հնչումն օտար է եւ խոտելի (էջ 199): Մինչեւ այստեղ Տիրոյեան ճիշտ է, բայց սխալում է, երբ փորձում է մեկնաբանել, թէ երբ է առաջացել արտասանական տարբերութիւնը: Նրա կարծիքով դեռ Մաշտոցի ժամանակ գոյութիւն ունէր արեւելահայ եւ արեւմտահայ բաժանումը, ըստ որում արեւմտահայերը մեծ խումբ էին կազմում, արեւելահայերը՝ փոքր: Մաշտոց գրերն ստեղծեց ըստ արեւելահայ արտասանութեան, որովհետեւ դա ոստանիկ լեզուի արտասանութիւնն էր: Հէնց թարգմանչաց ժամանակ արեւմտահայերը կային եւ Պետրոսը Բեդրոս էին արտասանում: Թէեւ ապացուցուած է, որ մեր տ-ն հինգերորդ դարում տ է արտասանուել, պ-ն՝ պ, դ-ն՝ դ, գ-ն՝ գ եւ այլն, սակայն Տիրոյեան, հետեւելով Գարագաշեանին, կասկածի տակ է առնում այդ: Հռոմի Հայկազնեան վարժարանի հայոց լեզուի ուսուցիչ Յովհ. Մխքճեանի կարծիքով ոչ թէ արեւմտահայերը, այլ արեւելահայերն են շեղուել մերոպեան հնչումից:

1888 թ. «Արեւելքում» (մարտի 3-ին, No. 1250) լոյս է տեսնում Կ. Ս. Իւթիւճեանի

«Առաջարկութիւնը», որտեղ ասուած է, թէ պէտք է պ, տ, կ, ծ, ճ տառերը կարգաւ արեւելահայերի նման, վերականգնելով աւել, օ-ի փոխարէն, զ-ի փոխարէն գրել փշիկով լ/ի: Յօդուածագիրն առաջարկով կազմուում է այդ հարցը քննող յանձնաժողով (Սիրմեան Հայրիկ, Գ. Սրուանձտեանց, Վ. Տերվիչեան, Դ. Գալանթարեան եւ ուրիշներ): Յանձնաժողովը երեք նիստ է գումարում: Եզրակացութիւնն այն է լինում, որ «Արեւելեան հայոց (Արարատեան) հնչումը սրբոց թարգմանչաց հնչման ճիշտ նման լինելու ամենամեծ հաւանականութիւնն ունի»², ուստի պիտի փոխել արեւմտահայ արտասանութիւնը, որպէսզի ստացուի մի մասնական արտասանութիւն ու գրութիւն: Որոշումն ընդունելուց առաջ այն ուղարկում են խոշոր հայագէտներին կարծիքի, որով եւ հարցը փակուում է անարդիւնք:

Այս հարցին սպառիչ պատասխան տուցին Հ. Գ. Մենէվիչեան, Հ. Արս. Այտրեան եւ Հիւբըման: Պատմութիւնը ցոյց տուեց, որ սրանք իրաւացի էին: Մենէվիչեան իր յօդուածում («Արեւելք» 1888 թ. 11-ը ապրիլի, No. 1283) ինչպէս առհասարակ, այս դէպքում էլ հանդէս է բերում գիտնականին յատուկ գործիմացութիւն եւ լեզուաբանական վերլուծութիւն: Յօդուածում նա գալիս է հետեւեալ եզրակացութեան.

1. Արեւմտահայ արտասանութիւնը լեզուական (հնչիւնական) փոփոխութեան արդիւնք է, մարդկան գիտակցական մօտեցման, միջնորդութեան հետեւանք չէ, այն ստեղծուել է դարերի ընթացքում եւ մի ամբողջ համակարգ է եւ ոչ թէ սխալ: Դեռ Ե դարից առաջ է կատարուել առաջին հնչիւնափոխութիւնը. սանսկրիտ baadh > հայերէն բանտ, լատին domus, սանսկրիտ dhama > հայ. տուն, dason > հայ. տասր եւ այլն: Արեւմտահայ արտասանութեան վրայ աւելի շատ եւրոպական լեզուներն են ազդել, քան թուրքերէնը: 2. Տարարտասանութիւնը չի խանգարում ազգի միութիւնը, բաւական է, որ գրաւորը միասնական լինի: 3. Պատշաճագոյն է հետեւել նախնեաց (ուստի եւ արեւելահայ) տառադարձութեան: Մխիթարեանները փորձեցին գրել ըստ Մաշտոցի հնչման, բայց նրանց չհետեւեցին, եւ նրանք էլ չարուանակեցին: Իր այս մտքերը Մենէվիչեան արտայայտում

² Տե՛ս մեր «Հայ-ի ուղղագրութեան պատմութիւն» 1973 թ., էջ 266:

է նաեւ 1930 թ. գրած «Գրական եւ լեզուական դիտողութիւններ» յօդուածում («Հանդէս ամսօրեայ» 1930 թ. նոյեմբեր-դեկտեմբեր): Երկու գրաւոր աշխարհաբար ունենք, ասում է նա, արեւելեան ու արեւմտեան, նրանց ծագումը այլ եւ այլ ժամանակներում, այլ եւ այլ տեղերում է տեղի ունեցել, այլ եւ այլ ազդեցութիւնների տակ: Հին «Մասիսը», «Բազմավէպը», «Ներուպան» տարբեր լեզուներից են ազդուել՝ Փրանսերէնից, թուրքերէնից, իտալերէնից, գերմաներէնից, ռուսերէնից: Ինչպէս տեսնում ենք, լեզուաբանը չի անտեսում ազդեցութիւնները, հընչիւնային օրէնքի հետ գործում են նաեւ հարեւան լեզուների ազդեցութիւնները:

«Հանդէս ամսօրեայի» 1888 թ. յուլիսի համարում (էջ 122) հրապարակուում է Հիւբըմանի կարծիքը, ըստ որի արեւմտահայ արտասանութիւնը սխալ համարելը գիտական չէ: «Եթէ տիդիսեցիք հին արտասանութիւնը պահած են, այս իրենց ոչինչ գովութիւն է, ինչպէս նաեւ արեւմտեան հայոց՝ նախնական արտասանութեան հետացած ըլլալը պարսականք չէ» (էջ 122): Բոլոր կենդանի լեզուներն էլ դարերի ընթացքում փոփոխուում են, միայն մեռած լեզուներն են անփոփոխ: Լեզուական փոփոխութիւնը կատարում է խօսողի կամքից անկախ, անգիտակցաբար: Ոչ մարդկային կամքն է այդ փոփոխութիւնն առաջ բերում, ոչ էլ այդ կամքը կարող է վերականգնել նախորդ վիճակը, ուստի անկարելի է, որ արեւմտահայերը հին արտասանութեան դառնան: Տիդիսցիների պահանջն անիրագործելի է, ուստի եւ՝ անարժէք:

Այս հարցի վերջնական ու մանրամասն քննութիւնը կատարեց Հ. Արս. Այտրեան, թէեւ Հիւբըմանի կարծիքն էլ հարցի ճիշտ լուծում էր: Իր «Տառադարձութեան խնդիր» յօդուածում («Հանդէս ամսօրեայ» 1888-1889 թթ.) Այտրեան գրում է, թէ ութսունական թուականներին արեւելցիներն սկսեցին տրտնջալ, թէ ինչու են արեւմտահայերը աղաւաղում մաշտոցեան գրութիւնը: Գիտական չէ եւ անարդար՝ մշակականների կարծիքը, թէ արեւմտահայերը չեն ունեցել հայ վարժապետներ, որ սովորեցնէին նախնեաց արտասանութիւնը, եւ մայրենին սովորել են օտարներից: Անհեթեթ է կարծել, թէ արեւմտահայ արտասանութիւնը նոր է, յատուկ Պոլսին, թուրքերէնի ազդեցութեամբ է ստեղծուել, Մխիթարեանների գիւտն է եւ այլն: Ճիշտ է, թրակացու թարգմանիչը հայերէնի բաղաձայ-

նական համակարգը ներկայացրել է երեք շարքով, յունարէնին նման՝ ա, տ, կ (π, τ, χ), բ, գ, դ (β, γ, δ) եւ փ, թ, ք (φ, ψ, χ), որ նշանակում է, թէ հինգերորդ դարում մենք ունէինք եռաչարք բաղաձայնական համակարգ՝ նուրբ, միջակ եւ ստուար: Բայց այդ համակարգը նոյնութեամբ չի պահպանուել, պատմութեան ընթացքում փոխուել է: «Մեծն Տարօնացուց աւանդած հընչմունքն այսօրուան Տարօնացուցն հնչմանցն համեմատ չեն եւ ոչ էլ նախնուց Կողբացուց գրածն այժմու Կողբացուցն կարգացածին» (անդ, էջ 208):

Եւ իսկապէս, այսօր ձայնեղները (միջակ) ձայնաւորներին ու ձայնորդներին (նայ) յաջորդելիս փոխուում են շնչեղ խուլ (թաւ) հնչիւնի վարդ, սուրբ, փորձ եւ այլն բառերն արտասանուում են վարթ, սուրփ, փորք: Բառակազմում յ-ն մեծ մասամբ հնչում է հ, ե-ն՝ եէ, ո-ն՝ վո, բառավերջի յ-ն չի արտասանուում եւ այլն: Մեծ հայագէտն իրաւացի է, երբ գրում է, թէ մինչեւ ժ դարը բաղաձայնների արտասանութիւնն ու օտար բառերի տառադարձութիւնը միասնական էր, ընդհանուր: Ժ դարից յետոյ արեւելահայերը պահպանեցին նախնաց արտասանութիւնն ու տառադարձութիւնը, իսկ արեւմտահայերը նոր փոխառեալ բառերը յարմարագրեցին ըստ իրենց արտասանութեան, իսկ հին փոխառեալները պահեցին հին տառադարձութեամբ: Սա Վիեննայի դպրոցի սկզբունքն էր:

Այտընեան իրաւացի է, երբ գրում է, թէ դեռ ժԱ-ժԲ դարերից մեզ յայտնի է հայերէնի նուրբ տառերի (պ, տ, կ) արտասանական փոփոխութիւնը: Սրան մենք կ'աւելացնէինք, որ այդ հընչիւնափոխութիւնն աւելի վաղ է նկատուում: Լազարեան Աւետարանում (887 թ.) հանդիպում են մի կողմից՝ հունձք, կանկնեցաւ, ամպոխ (փոխ. հունձք, կանգնեցաւ, ամբոխ), միւս կողմից՝ ծունգ, մանգանց, բանդէ, տընգեաց (փոխ. ծունկ, մանկանց, բանտէ, տընկեաց): Առաջին դէպքում գործել է հնչիւնափոխութեան տարնմանման օրէնքը. ն, մ ձայնորդները (նայ) իրենցից հեռացրել են ձայնեղներին, վերածել խուլերի, երկրորդ դէպքում՝ առնմանման օրէնքը. նոյն ձայնորդները խուլերին իրենց են նմանեցրել՝ փոխելով ձայնեղի (ձ > ծ, գ > կ, բ > պ, կ > գ, տ > դ): Այս երեւոյթը նկատելի է 10-րդ դարից էլ առաջ գրուած ձեռագրերում ու վիմական արձանա-

գրութիւններում⁵: Նշանակում է արեւմտահայ արտասանութիւնը շատ հին է, հետեւանք հնչիւնային օրէնքի, այստեղ պատճառը ոչ թուրքերէնն է, ոչ Պոլիսը եւ ոչ էլ Միսիթարեանները: Այտընեան դարմանում է, թէ ինչպէս կարող է Կիլիկիայի բաղաձայնների խլազրկութիւնը Ֆրանսերէնի ազդեցութիւնից առաջանալ, չէ՞ որ Ֆրանսերէնում կան խուլ հնչիւններ, եւ հայերն են նրանց խուլերը ձայնեղ արտասանում: Միանգամայն զիտական է Այտընեանի եզրակացութիւնը՝ լեզուական փոփոխութիւնը կատարում է մարդկան կամքից անկախ, լեզուական (հնչիւնական) ներքին օրէնքով: Լեզուաբանը, ի հարկէ, չէր կարող ժխտել հարեւան լեզուների ազդեցութիւնը, եւ Այտընեան նշում է արեւմտահայերի որոշ արտասանութիւնների (ո-ր, ծ-ձ-ց) առաջացումը թուրքերէնի եւ այլ լեզուների ազդեցութիւնից: Բայց դրանք մասնակի են եւ համակարգ չեն ստեղծում:

Յայտնի բան է, որ տառադարձութեան ժամանակ պէտք է հարազատ մնալ փոխատու լեզուի հնչման: Սակայն, նշում է Այտընեան, դա դժուարանում է նրանով, որ նրանց Ե դարի արտասանութիւնն այսօր փոխուել է, եթէ յարմարագրենք նրանց հին արտասանութեամբ, այսօրուայ յոյնը կարող է չձանաչել իր բառը: Անդրադառնալով տասնիններորդ դարի տառադարձութեան՝ Այտընեան այն ներկայացնում է 3 խմբով. 1. Սառնակ յարմարագրութիւն (Demidov > Դեմիտով - d > դ, d > տ), 2. անխառն արեւմտահայ (baron > պարոն) եւ 3. անխառն ուսաստայ (Berlin > Բեռլին):

Այժմ, եզրակացնում է Այտընեան, կանոնաւորուած է արեւմտահայերէնի ուղղագրութիւնը: «Զկայ լեզու մը այնպէս որոշ կանոնաւոր կերպով երկու կարգ բաղաձայններին իրարու անվրէպ փոխանակած, ինչպէս արեւմտեան ըսուած հայերէնը դարերէ ի վեր (անդ, 189, էջ 40): Այտընեանի նոյնպէս ցանկալի է հայերէնի երկու հատուածներում մի միասնական արտասանութիւն ու գրութիւն ստեղծել, բայց առաջինն անհնար է, երկրորդի համար պէտք է երկու կողմերն էլ մտածեն:

Մանդինեանի «Արօրը» 1910 թուին (No. 1) գրում է, թէ նկատի ունենալով և հնչիւնի խառնակ գրութիւնը՝ հետեւում է Մալխասեանի

⁵ Տե՛ս մեր «Ուղղագրութեան պատմութիւն», էջ 13-14:

առաջարկին եւ այսուհետեւ և հնչիւնը ամենուրեք գրում է վ տառով (նալ, գրված, թիվ, վազք, սել, նվէր), և-ն թողնելով իրբեւ իւ, ու կապակցութիւնների բաղադրել, եւ-ը գրում է և տառով, իսկ նրա մեծատառը՝ Եւ կապակցութեամբ:

Այս առիթով «Հանդէս ամսօրեայի» 1910 թ. ապրիլի համարում լոյս է տեսնում Հ. Գ. Մենչվիչեանի ընդդիմախօսական յօդուածը՝ «Հայերէնի դէմ յանդգնութիւն մը» խորագրով: Այստեղ հեղինակը վե՛վագրութիւնը վանդալութիւն է համարում մեր դարաւոր ուղղագրութեան դէմ: Դրանով ասում է նա, «Արօրը» դուռ է բաց անում՝ գրաւոր խօսքում «ուզողն ուզածն անելու» եւ «յօնքը շինելու տեղ աչքը հանելու»: Եթէ «Արօրը» գրում է քաղաք, ինչպէ՞ս կարող է արգելել մէկ ուրիշին գրելու տա՛ւալօտ: Կարելի է վիճել բայերի խոնարհման, գոյականների հոլովման համակարգում վ կամ ւ գրելու շուրջը (գտնել-գտնվի-գտնուի, թվի-թւի-թուի եւ այլն), բայց կայուն, անշարժ կալուածք դարձած բառերին չպիտի ձեռք տալ: Վ-ի եւ ւ-ի գրութեան մէջ դպրոցականն անգամ չի սխալագրութեան մէջ դպրոցականն անգամ չի երկու հատում: Մենչվիչեան նոյնպէս կողմ է երկու հատումներում ստեղծել միասնական գրութիւն, բանաւանդ տառադարձութիւն, բայց միասնական արտասանութիւն նրա կարծիքով հնարաւոր չէ ստեղծել:

Այս յօդուածից յետոյ Մանդինեան հարցում է անում Մենչվիչեանի, թէ ինչու չի առարկում յունագրութեանը, որ քանդել է մեր ուղղագրութիւնը: «Հանդէսի» յունիսի համարում հայաթիւնը: «Հանդէսի» յունիսի համարում հայաթիւնը: Պիտի աւելացնեմ, որ ուսանելը նոյնպէս շատ են ձգտել հեշտացնել ուղղագրութիւնը: Դեռ Պետրոս Մեծն էր պահանջում գրել ըստ արտասանութեան: Առաջարկութիւններ են անում Տրեթյակովսկին (1748 թ.), Զասյադկոն (1871 թ.), բայց գրութիւնը մնում է աւանդականը: Անգլիացիք հնչիւնային գրութեան յատուկ օր են յայտարարում, 1862 թ. վեց ամսագիր էր լոյս տեսնում հնչիւնային գրութեամբ, բայց աւանդական ուղղագրութիւնը չփոխուեց: Անգլերէնի ուղղագրութիւնը իր բոլոր բարդութիւններով ու դժուարութիւններով հանդերձ պարտադիր ու միասնական է ողջ Անգլիայում, դրանում է նրա առաւելութիւնն ու ուժը: Ֆրանսիացիք յայտարարում են, թէ ով առաջարկում է հնչիւնային ուղղագրութիւն, նա Ֆրանսերէն չգրի: Հնչիւնային ուղղագրու-

ծում յետադիմական է համարում թագաւոր, շնորհիւ, տրաւած գրութիւնները, իսկ առաջադիմական՝ թագաւոր, շնորհիւ, տրված գրութիւնները: Մենչվիչեան իրաւացիօրէն դարմանում է, որ «Մշակի» նման մի լուրջ թերթ այդպիսի միամիտ մտքեր է թող տալիս իր էջերում:

«Հանդէսի» այս նոյն թուականի օգոստոսի համարում լոյս է տեսնում Մենչվիչեանի մի այլ յօդուած՝ «Ստեփան Մալխասեան «ճախող լեզուաբարդար» խորագրով, որտեղ նշում է ուղղագրութեան երկու հիմունք՝ հնչական եւ ըստուգաբանական, սրանք էլ իրենց հերթին կարող են լինել աւանդական, պատմական: Յօդուածագիրը բացատրում է ե-է, վ-ւ, յ-ճ լծորդ հնչիւնների տարբերութիւնը: Պահանջում է տարբերել մեզմէ՛զ, սերսէ՛ր, պետպէ՛տ, յովհով, յողհող, յանգհանք, արատա՛ւատ, Նորաւան՝Նորա՛վան, նախաւար՝նախա՛վար, գուգահեռ գրութիւնները: Սրանց տարբերելու միակ միջոցը գրութիւնն է, քանի որ հնչումն նոյնն են: «Հանդէսի» այս նոյն թուականի (1910) մայիսի համարում լոյս է տեսնում նրա յաջորդ յօդուածը՝ «Հայ լեզուի ուղղագրութիւնը» խորագրով: «Մէկ հնչիւնին մէկ գիր» վարդապետութեան կողմնակիցները մոռանում են, ասում է նա, որ աշխարհի լեզուներում հնչիւնների փոփոխութիւն է կատարուել, իսկ գրաւորը պահպանուել է: Այդպիսին է նաեւ վիճակը հայերէնում, Ֆրանսերէնում, անգլերէնում, գերմաներէնում, ռուսերէնում եւ այլն: Ֆրանսիացիք Ե հնչիւնը հինգ ձեւով են գրում, ռուսերէնում Ե տառը տարբեր դիրքում տարբեր հընչում ունի եւ այնուամենայնիւ նրանք գրութիւնը չեն փոխում: Պիտի աւելացնեմ, որ ուսանելը նոյնպէս շատ են ձգտել հեշտացնել ուղղագրութիւնը: Դեռ Պետրոս Մեծն էր պահանջում գրել ըստ արտասանութեան: Առաջարկութիւններ են անում Տրեթյակովսկին (1748 թ.), Զասյադկոն (1871 թ.), բայց գրութիւնը մնում է աւանդականը: Անգլիացիք հնչիւնային գրութեան յատուկ օր են յայտարարում, 1862 թ. վեց ամսագիր էր լոյս տեսնում հնչիւնային գրութեամբ, բայց աւանդական ուղղագրութիւնը չփոխուեց: Անգլերէնի ուղղագրութիւնը իր բոլոր բարդութիւններով ու դժուարութիւններով հանդերձ պարտադիր ու միասնական է ողջ Անգլիայում, դրանում է նրա առաւելութիւնն ու ուժը: Ֆրանսիացիք յայտարարում են, թէ ով առաջարկում է հնչիւնային ուղղագրութիւն, նա Ֆրանսերէն չգրի: Հնչիւնային ուղղագրու-

թեամբ կ'առաջնորդուեն այն ժողովուրդները, որոնք նոր են ստեղծում տառերը եւ գրաւոր խօսքը, գրական ժառանգութիւն (գրաւոր) դեռ չունեն: Շատ լաւ է ասուած, թէ բարդ, նոյնիսկ պակասաւոր, բայց ողջ ազգի համար պարտադիր ու միասնական ուղղագրութիւնը աւելի լաւ է, քան հեշտ ու անթերի, բայց ազգի միայն մի հատուածի կողմից ընդունուած ուղղագրութիւնը:

Մեր ուղղագրութիւնը, ասում է Մենէվիչեան, դժուար է, պէտք է իմանալ ե-է, օ-ո, վ-ւ հնչիւնների գրութեան մի երկու կանոն: «Կը դատապարտենք նւէրն ալ, նվէրն ալ, կը մնանք հաստատուն նուէրի վրայ, քանի որ այս վերջինը կը կապէ զմեզ մեր նախնեաց կանոնաւոր ուղղագրութեան հետ» (էջ 143): «Փոխանակ մէկ հնչման մէկ գիր» ըսելու, կ'առաջարկենք «մէկ հայու մէկ լեզու, գոնէ ուղղագրութեան մասին» (անդ, էջ 143):

«Մշակի» 1910 թ. 47, 60, 68, 118 համարներում լոյս է տեսնում Լ. Մարկոսեանի յօդուածաշարը՝ «Այբուբենի ռեֆորմը» խորագրով: Նշելով, որ մեր ուղղագրութիւնը բաբելոնեան խառնակութիւն է՝ ուզում է պարզութիւն մը ստեղծել նրանում «մէկ հնչիւնին մէկ գիր» սկզբունքով, բայց աւելի է խառնում գրութիւնը: Առաջարկում է մի կողմ թողնել ոսկեղէնիկ գրաբարն իր ուղղագրութեամբ եւ՝ 1. հ հնչում ունեցող յ տառի փոխարէն գրել հ տառը, 2. ամենուրեք օ հնչիւնը գրել օ տառով, ռ-ին տալ ռ-ի արժէք յօ-ն գրել ւօ տառակապակցութեամբ, 3. յ հնչիւնը գրել ք տառով, օ-ն՝ է տառով, 4. յ հնչիւնն ամենուրեք գրել ւ, իսկ վ-ն թողնել իբրեւ նրա մեծատառ (ւանք, Վահան), 5. պահել բառավերջի համը յ-ն, իւ-ն գրել յ տառակապակցութեամբ: «Հանդէս ամսօրեայում» (1910, օգոստոս) Մենէվիչեան քննադատելով ու մերժելով այս առաջարկութիւնը՝ գրում է, թէ ըստ Մարկոսեանի պիտի գրենք.

Մէր հայրէնիք թշուառ անտէր
 Մէր թշնամոց ւօտնակօխ,
 Յոր ւօրդիքը արդ կանչում է
 Հանէլ յոր ւրէժ քէն ու ւօխ:
 Մէր հայրէնիք շղթանէրօւ
 Այսքան տարի կապկապուած,
 Յոր քաջ ւօրդօց սորբ արյոնօւ
 Պիտի լինի ազատուած (անդ, 229):

Մեր է-ե, յ-հ, ւ-վ լծորդները, ասում է նա,

նոյն հնչիւնները չէին, ուստի եւ տարբեր գրերով էին արտայայտուում: Մենք պիտի պահենք այդ գրերն անաղարտութեամբ: Միանգամայն արդարացի է Մենէվիչեան, երբ գրում է, թէ այսօր Մալխասեանին ու Մարկոսեանին լսենք, վաղն էլ մի ուրիշի պիտի լսենք եւ ստեղծենք մի շփոթ գրութիւն: «Հնաւանդութիւնը լեզուի գոյութեան առաւելութիւնն է» - եղբակացնում է հայագէտը (էջ 233):

Հայերէնի ուղղագրութեան վերաբերեալ Մենէվիչեանի յօդուածների անփոփոխումն է 1913 թ. տպագրուած «Ուղղագրութեան խնդիր կա՞յ հայուն համար» յօդուածը («Հանդէս Ամսօրեայ, 1913 թ. Իէ»): Հեղինակի կարծիքով եթէ խօսքը վերաբերում է բնիկ հայերին (գարմանալի կերպով բնիկ հայ ասելով նա միայն հասկանում է արեւմտահայերին, կարծես արեւելահայերը բնիկ չեն), ուղղագրութեան հարց չկայ, իսկ արեւելահայերի համար կայ: Հայագէտն այն կարծիքին է, թէ արեւմտահայը հեշտութեամբ տարբերում է միջին, լերկ եւ թաւ, բ, պ, փ, ինչպէս եւ վ-ւ, օ-ո, է-ե տառերի գրութեան կանոնները եւ սխալ թոյլ չի տալիս (այստեղ էլ առանձնացնելով արեւմտահայերին): Նկատելի է, որ լեզուաբանը շատ է հեշտացնում մեր ուղղագրութիւնը, այն էլ արեւմտահայերի համար, բայց չէ՞ որ հենց արեւմտահայ շատ մտաւորականներ, տեսնելով այդ դժուարութիւնը, պահանջում են ուղղագրական փոփոխութիւններ: Ուղղագրութիւնը փոխելու հարց չպիտի լինէր ոչ արեւմտահայերէնում, ոչ էլ արեւելահայերէնում, երկուսում էլ պիտի պահպանուէին աւանդականը, սա է ճիշտը: Իսկ եթէ խօսքը վերաբերում է հեշտ կամ դժուար լինելուն, ապա հանրայայտ բան է, որ արեւմտահայ գրութիւնն աւելի դժուար է: Արեւմտահայերէն սովորողը պիտի տարբերի սեր-սէր, գետ-գէտ, մեզ-մէզ, նուէր-նվեր, հոտ-հօտ գոյգերը, պիտի գրի բառավերջի համը յ-ն, պիտի իմանայ, թէ ո՞ր դէպքում են ծուլութիւն, հայ, մայրիկ եւ նման բառերը գրուում փոքրատառով, ո՞ր դէպքում՝ մեծատառով, պիտի իմանայ, թէ ո՞ր դէպքում է բառակցիկ հ հնչիւնը գրուում յ տառով, ո՞ր դէպքում՝ հ տառով եւ այլն, եւ այլն: Այսօր արեւելահայ սովորողի համար այդպիսի խնդիր չկայ: Ուրեմն, եթէ հեշտութեան հարց է, այսօրուայ խորհրդային Հայաստանի ուղղագրութիւնն է հեշտը: Միանգամայն այլ խնդիր է, որ աւանդական ուղղագրութիւնը չպիտի փոխուէր, դա սխալ քայլ էր խորհրդային Հայաստանում: Դա մի կողմից՝ դժուարացրեց մեր

անցեալի դարաւոր մշակոյթի իւրացումը, միւս կողմից՝ մեծացրեց մեր ժողովրդի, մեր ազգութեան միջեւ եղած ճեղքը՝ դժուարացնելով նրանց գրաւոր հաղորդակցումը միմեանց հետ: Լուծելի հարց է, թէ կը ստեղծուի՞ մի միասնական ուղղագրութիւն մեր երկու հատուածի համար, դժուար է ասել, երեւի՞ ոչ: Մենէվիչեան (եւ «Հանդէսը») համամիտ է միասնական արտասանութիւն եւ գրութիւն ստեղծելուն, բայց պայմանները չկան այն իրականացնելու: Ուստի, ասում է նա, ուղղագրական միջնորդը արեւելեանի ու արեւմտեանի միջեւ մնալու է: Ռուսահայերն իրենց հայերէնը, ոճն ու ուղղագրութիւնն ունեն, թող ունենան, բայց թոյլ տան, որ մենք էլ պարծենանք, թէ «մեր ուղղագրութիւնը կապուած է մեր անցեալի, մեր գրաբար հարուստ գրականութեան, մեր ժողովրդի հետ: Գնա՞նք այդ կապը, կը նշանակէ գործել պատմական մեծ սխալ» («անդ, էջ 730): Անդրադառնալով տառադարձութեան մեծ հայագէտը գտնում է, որ պիտի պահպանել Մաշտոցեան (ուրեմն արեւելահայ) տառադարձութիւնը: Դպրոցում պիտի սովորեցնել այդ տառադարձութիւնը: Յօդուածագիրն իրաւացիօրէն մեծարում, բարձր գնահատական է տալիս Մխիթարեանների ստեղծած մշակոյթին: «Մահակ ու Մերոպ ծնան գրաւոր հայերէնն, Մխիթար մըն ալ մշտնջենաւորեց գոնէ արեւմտեան հայերէնն իւր գրականութեամբ, դպրութեամբ (անդ, էջ 729): «Սիրտս պիտի հայ գգայ, միտքս հայ պիտի խորհի, լեզուս հայերէն պիտի խօսի, - եղբակացնում է նա»:

Հայերէնի ուղղագրութեան պատմութեան համար չափազանց կարեւոր է մեծ հայագէտ Հրաչեայ Աճառեանի «Քննութիւն կրկնադիր Ագաթանգեղոսի» ուսումնասիրութիւնը՝ տըպագրուած «Հանդէս ամսօրեայում» (1913 թ. Յունուար): Յօդուածի սկզբում բացատրում է, որ տէրունական (հոգեւոր) անունները մեր նախնիք գրում էին համառօտագրուած եւ վրան դնում էին - նշանը, որ կոչուում էր պատիւ նշան (ԱՅ, ՔՄ, ՅԱ...), որոնք պահպանուում էին նաեւ ածանցման ու հոլովման ժամանակ (ածային, Քի, դժ...): Աճառեան եմֆատիզըրում է, թէ պատիւը սեմական լեզուներից պիտի անցած լինի մեզ: Կրկնագրում հանդիպում է մէկ անգամ համառօտագրուած մի սովորական բառ՝ պարկեշտութիւն, որ վկայում է, թէ համառօտագրութիւնն ինքնորոգ դարից սկսուում է տարածուել նաեւ ոչ տէրունական բառերի վրայ: Կրկնագրում գլխագրերի յատուկ ձեւ

չկայ, դրանք սովորական տառերն են՝ աւելի մեծացրած: Գլխագրերով գրուել են նոր տողից, վերջակէտից յետոյ եւ մի քանի յատուկ անուններ: Շատ յատուկ անուններ էլ փոքրատառով են գրուած: Յատուկ անունների մեծատառով գրելու կանոն չի եղել: Վերջակէտն արտայայտուած է մէկ կէտով, կայ նաեւ ստորակէտ: Ենթամայ (տողադարձի գիծ) չկայ:

Մեծ լեզուաբանը շատ աւելի մանրամասն է քննել կրկնագրութիւնը եղած տողադարձը: Նա գրում է, թէ հայերէնում տողադարձի միասնական կանոն չի եղել նոյնիսկ 19-20-րդ դարերում: Ռուսերէնին հետեւողը չի սիրում մէկ տառը յաջորդ տողը տանել, գերմաներէնին հետեւողը թոյլ չի տալիս բարդ բառերը կտրատել (ոչ թէ վրիժառու, այլ՝ վրիժառու), եւրոպական լեզուներում 1, m, n, r տառերը նախորդ բաղաձայններից մէկը կպցնում են իրենց, որոշ լեզուաբաններ ուզում են դա կիրառել նաեւ հայերէնում եւ գրում են՝ հա-գնիլ, ան-գրի, ա-քլոր, մա-րդկան եւ այլն: Ուրիշներն էլ յունարէնի օրինակով չեն ուզում երկբարբառը տրոհել, գրում են՝ աւ-ետարան, հայ-ու, գոյ-ութիւն, որոնք լեզուաբանը համարում է օտարմուտ ձեւեր: Հայերէնի օրէնքը վանկատումն է: Պիտի ասեմ, որ «Հանդէս ամսօրեան» նոյնպէս երկբարբառը չի տրոհում, գրում է՝ պահաւ-երէն, կարեւ-որութեամբ, յօ-դուածագիր, մանաւ-անդ, հայ-ոց եւ այլն: Անդրադառնալով կրկնագրի տողադարձին՝ Աճառեան գրում է, թէ այնտեղ հաշուել է 712 տողադարձ, որից 505-ը վանկատումով է (կանոնաւոր): Ելնելով այս քանակից եւ այն բանից, որ 92 դէպքում գրիչը վերջին տառը չի տարել յաջորդ տողը, գրել է նախորդ տառի գլխին (պարտուց, ճմարտութիւն), կամ գրել է յաճախ-ցես, արամ-չին, ճանաչ-ես եւ այլն, Աճառեան հակուած է կարծելու, թէ գրիչը վանկատման օրէնքով է տողադարձ կատարել: Հայագէտը կրկնագրում տողադարձի որոշ օրինաչափութիւն է տեսնում: Այսպէս՝ 1. եթէ յ-ին յաջորդում է ձայնաւոր, մնում է նախորդ տողում, իսկ եթէ բաղաձայն՝ անցնում է յաջորդ տող (տղայ-բար, բայց՝ ամենա-յն), 2. ձայնաւորին նախորդող աւ-ը չի բաժանուում (թագաւորի), 3. բաղաձայնին նախորդող եա, իւ, ոյ, աւ երկբարբառները տրոհուում են (մարթացեալ, արիւ-ւն, լո-յս, հաւ-ւրն եւ այլն):

Մենք այլ ձեռագրերի տուեալներից ելնելով՝

